ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ և ՍՈՑԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2019Թ. ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ՄԱՍԻՆ

Սոցիալական ապահովության բնագավառ

2019 թվականի 1-ին կիսամյակում նպաստ է ստացել 1863 ընտանիք, որից ընտանեկան նպաստ՝ 1388 և սոցիալական նպաստ՝ 475 ընտանիք: Վճարվել է 326,7մլն դրամ նպաստ: Հրատապ եռամսյակային օգնություն է ստացել 102 ընտանիք, վճարվել է 9,7 մլն դրամ: Ավանդների փոխհատուցում է ստացել 88 մարդ՝ վճարվել է 17,5 մլն. դրամ :

Մարզում կենսաթոշակառուների թիվը 9263 է, որոնց վճարվել է շուրջ 2,2 մլրդ. դրամ կենսաթոշակ:

Մարզի զբաղվածության տարածքային կենտրոններում գրանցվել է 925 գործազուրկ: Աշխատանքի է տեղավորվել 140մարդ:

Հաշվառվել է բնակարանի բարելավման կարիք ունեցող 1 հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայող: Հաշվառված է ընդամենը 43 ընտանիք:

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով 389 քաղաքացիների հատկացնել 17.3մլն դրամ դրամական օգնություն:

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի
առողջապահության և սոցիալական ապահովության
վարչության պետ Վ .Ասլանյան

03.07.2019թ.